ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Հարթագյուղ համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Հարթագյուղ	Ավագանու արտահերթ նիստ	07.08.2020թ.	10:00	Հարթագյուղի համայնքապետարան (գ.Հարթագյուղ 6 փողոց, 3 շենք)

Նախագիծ

ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020թ.
ՕԳՈՍՏՈՍԻ 07-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Հարթագյուղ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Հարթագյուղ համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 07-ի արտահերթ նիստի օրակարգը

Օրակարգ

1. Հարթագյուղ համայնքի ավագանու թիվ 18-Ա արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին :
   Զեկ. Ա.Հարությունյան

2. Հարթագյուղ համայնքապետարանի քաղաքական,հայեցողական ածխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի ածխատակիցների թվաքանակը հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին :
   Զեկ. Ա.Հարությունյան

3. Հարթագյուղ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
   Զեկ. Ա.Հարությունյան

Նախագիծ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով, « Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 33-րդ և 37-րդ հոդվածներով, համայնքի ավագանին որոշում է .

1. Հաստատել Հարթագյուղ համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը /համաձայն հավելվածի/:

2. Հարթագյուղ գյուղական համայնքի ղեկավարին՝ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հարթագյուղ համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 18-ի թիվ 25-Ա որոշման թիվ 1 հավելվածը:

Նախագիծ

ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, և համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հարթագյուղ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 5-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Հարթագյուղ համայնքի ավագանին որոշում է

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղ համայնքի ավագանու
2020 թվականի օգոստոսի 07 -ի թիվ 20-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Առաքելյան Նունե Կառլենի----------40000 /քառասուն հազար դրամ/ սոց.օգնություն/
2. Խալաթյան Նազիկ Սուրենի----------30000 /քառասուն հազար դրամ/ սոց.օգնություն/

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 80000/վաթսուն հազար/ ՀՀ դրամ: